Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում ճապոներեն լեզվի ուսումնասիրման համար պայմանների բարելավման ծրագրի ավարտի հանդիսավոր արարողություն

Մարտի 21-ին հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում տեղի ունեցավ ճապոներեն լեզվի ուսումնասիրման համար պայմանների բարելավման ծրագրի ավարտի հանդիսավոր արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էիջի Թագաչին տիկնոջ հետ, Սլավոնական համալսարանի ռեկտոր Արմեն Դարբինյանը, Ճապոներեն լեզվի բաժնի ղեկավար, Կարինե Քարամյանը, համալսարանի դասախոսական և պրոֆեսորական կազմը, ուսանողներ և այլոք:

Դեսպան Տագուչին իր ելույթում կարևորեց Հայաստանում ճապոներեն լեզվի ուսուցման խրախուսման անհրաժեշտությունը՝ մեր երկու երկրների միջև հարաբերությունների զարգացման համար, և հույս հայտնեց, որ այս կենտրոնը նոր կադրեր կկրթի, ինչը կնպաստի Ճապոնիայի և Հայաստանի հարաբերությունների զարգացմանը:

Ռեկտոր Արմեն Դարբինյանը շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը աջակցության համար և նշեց, որ կենտրոնի բացումը կնպաստի Հայաստանում ճապոներեն լեզվի ուսուցմանը և մեր ժողովուրդների միջև հարաբերությունների զարգացմանը:

Ճապոներեն լեզվի բաժնի ղեկավար, Կարինե Քարամյանը նույնպես շնորհակալություն հայտնեց բոլոր այն կողմերին, որոնք ներգրավված են եղել այս ծրագրի իրականացման գործում և հակիրճ ներկայացրեց Ճապոնիայի ինստիտուտների միջև մշակույթային և կրթական փոխանակման պատմությունը :

Ծրագրի անվանում՝ Հայ-ռուսկական (Սլավոնական) համալսարանում ճապոներեն լեզվի ուսումնասիրման համար պայմանների բարելավման ծրագրի

Ստացող : Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանում

G/C Amount : 31,197 ԱՄՆ դոլար

G/C Signed Date : Մարտ 31, 2017

Ռեկտոր Դարբինյանի խոսքը

Դեսպան Տագուչիի խոսքը

Ճապոներեն լեզվի բաժնի ղեկավար՝
Կարինե Քարամյանի ողջույնի խոսք

Տրամադրված սարքավորումները

Բացմանը նվիրված միջոցառում